

ՆԱԽԵՎԱՃՐՄՈՒՆՔՆԵՐ

ԵՂԻՃԵ ՊԱՏՄԱԳՐԻ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ



Աղիշէ վարդապետի անուան վերագրում են մի հարք աշխատութիւններ, որ անկասկած մեղուարան պատմաբանի մտքի և գրչի արդիւնք չեն, ալլ աւելի ուշ ժամանակում ապրող անլաւտ անձինք ցանկանալով ընդունուած սովորութիւններն համաձայն բարձրացնել իրենց դրուածքի արժեքը, ծածկել են իրենց անունը, աշխատութիւնն լաջողութեանը նուիրելով անուանական լիշտավակութիւնից սպասելիք փառքն ու պատիւր, նթէ հեղինակները իրենք չեն կեղծել, արտադրողները կամ ուրիշ դրադէտներ են ալդ վաս պաշտօնը կատարել, դա շատ սովորական երեսով էր հնում, որ կատարուամ է և ալժմ միաւն փոխուսուած ձեռով. Հնում վերցնում սեպհականում էին լաւանի հեղինակների անուններ, ալժմ դրա փոխարէն իրացնում են ուրիշի մտքի արդիւնքը՝ փառաւորելու իրենց ոչինչ նշանակութիւն չունեցող անունները, կեղծելու ալդ ալլանդակ սովորութիւնը միշտ մեծ դժուարութիւններ է ձնեցրել, երբ հարկաւոր է եղել մասնագիտոքն որն է հարց լուծել, երբ ճշմարիտը իմանալով կարելի կը լինէր անցեալի խոկական պատեհեր ստանալ, Հեռուն չղընանք, Ահա զրուած է մեր առաջ մի կանոնական զրուածք, նրա կանոններից մէկը նուիրած է Հալոց մէջ հնումը գոլութիւն ունեցող սնուիապաշտական հաւատալիքներին, նկարագրուած են մի շարք ժաղարգական հմալութիւններ, գուշակութիւններ, որոնցից մեծ մասը և համարեալ բոլորը մինչեւ ալտօր էլ անփոփոխ պահուած են մեր հասարակ ժողովրդի մէջ. նթէ խոկապէս կանոնի հեղինակը նղիշէ վարդապետն է, որովհետև ալս է կանոնի վերնազիրը, ԱՍամաններ և կանոնը սրբոյն և զիշէ ի առ ի խրատ ամնայն որդիս մարդկանք, ապա ուրեմն մեր առաջ զրուած կը լինէր մօտ 1400 տարուակ ժողովրգական սնուիապաշտական սովորութիւնների մի փոքր նկարագիրը. Առ ալժմ չենք կարող մի որոշ բան ասել, թէ եթէ

կանոնները նղիշէինը չեն, որ ժամանակն են դրի առնուած, բայց անհերքելի է, որ նրանք շատ հին պիտի լինեն, որովհետեւ 13-րդ դարու ձեռագրերում ընդօրինակուած են և Վենետիկի հալքերը առանց վարանուելու, ընդունել են նղիշէի անունը կրող գործերի շարքում և ի միասին հրատարակել *): Սական այն ձեռագրի օրինակը որից վենետիկեցիք կատարել են իրենց հրատարակութիւնը, թերի է եղել և մեզ հետաքրքրող կանոնը մի քանի ուրիշների հետ չէ ունեցել:

Կանոնի մէջ շօշափուած են հետեւալ խնդիրները:

ա. Բացատրուած է զանազան հիւանդութեանց պատճառները՝ ցրտից, կերակուրներից և դիւանարութիւններից. դիւանարութեանց տեսակները առաջ բերուած, բացատրուած և բարոլական խրատներով միջոց է զոլց տրում ազգ հիւանդութիւնից առողջանալու (Ահա ալդ է տպագրածի բովանդակութիւնը, էջ 363—368):

բ. Ալլազգիների մօտ խաչ տեսնողը պէտք է գնէ, խոկ քրիստոնեաները իրաւունք չունին միմնանց վրայ խաչ ծախել կամ առնել. (Ձեռ. Օրին.):

գ. Նապաստակի և մեռելոտի կենդանու մէս ուտելը լանցանք է. եթէ մէկը նապաստակի միս ուտի անզիտակցաբար. նա 40 օր պիտի ապաշխարէ պահքով, եթէ գիտութեամբ՝ 2 տարի. Հոգնորականը անգիտակցաբար կերած ժամանակ երկու քառասունք պիտի ապաշխարէ, զիտակցաբար ուտելիս՝ 7 տարի:

դ. Հերձուածողները երկպառակութիւն սերմանողներ են և ալղպիտիները կ'ենթարկուն Աստուծոյ դատաստանին.

ե. Շատերը օգտուելով մարդկանց դիւրանաւատութիւնից, սատանալի թելազգութեամբ հնարել են շատ ստեր, որով վնասում են անմեղներին. Կանոն գրողը թւում է մոլորութեան աղբիւր ծառալող հմալքները.

զ. Նթէ ծառը մէկի մահուան պատճառ է դարձել, նրան չէ կարելի վնասել. անշունչ առարկալ է (տես Մխիթար Գօշ Դատաստանագիրք էջ 323, կամ. 111):

Մեզ հետաքրքրող կանոնը 5-րդն է, որ առաջ հնք բերում անփոփոխ:

սԵւ ալլ չար սովորութիւն, որ ուսուց սատանալ, որով օտարացուցանէ զմարդիկ ի ճշմարիտ զիտութենէն, և ի ներքուս ած կա-

+) Սըրոյ Հօրն մերոյ նղիշէի վարդապետի մատենագրութիւնք. Վենետիկ 1859 թ. էջ 363—368:

խարդութիւն և հմակութիւն, որ են ազդալինք, մաքիննցոց և վաղենուացոց և չար ազանդոց նոցա պաշտօնեալք և աշակերտք, և տեսեալ զիւացն զջերմութիւն նոցա մտացն ի ցուց և ի տեսիլ տաճ նոցա, նաև օգնութիւն, խոստովանութիւն և զօրութիւն Աստուծու. կարծեցուցանեն զանձինս թէ իցեն, իսկ ի հոգւոցն չնորհաց մերկացեալ մարդիկ լուսան ի սատանալ որպէս ի զօրութիւն Աստուծու. և արբանեակս նորա որ են դեք լուսան՝ որպէս ի հրեշտակս Աստուծու. Քանի և խաւարալին դեք կերպարանին ի հրեշտակս և ցնորմցուցանեն զանմիտաւ:

Այլ և օտար և ազդի ազդի զանուանս օդեն միմեանց և կոչեն անուանէ իշխանք և պէտք ինքեանց՝ Դարրիէլ և Միքալէլ անուամբ, Որպէս թէ պէտք և իշխանք ամենան հրեշտակաց զոլով և անմիտ մարդիկ հաւանեալ, հաւատան սատանալի իրբն Աստուծու և զիւացն իրբն հրեշտակացն Աստուծու, և անուանցն, որք կոչեն հրեշտակաց անուանց, Այսպէս չարամիտ մարդիկ ընտրութեամբ ի նոցա լարեցան և զիսաւարալին խորհուրդս նոցա լուսան ի կորուստ անձանց և ամեննցուն, որք լսն նոցա խարէութեանն և բազմացուցանեն զշար ուսումն զոր ուսան ի սատանալէ, և աշակերտեցան նոցա և եղեն իրբն զնոսա մերկացնեալք ի մերտութենէ չնորհացն, եղեն անմեկնելի բնակութիւն զիւաց, ուսեեալք զշար արուեստն արբանեկացն սատանալի, Վարդապետութեամբ զիւացն զրեն զանուանս հրեշտակաց և սորոցն Աստուծու, զառաքելոց և մարդարէից և ալլ բազուժ հոգեկորպս և օտարացուցիչս Աստուծու բանս լոգեն և զրեն ի քարտիսի և խառն ընդ անուանս բանախաղք շինին չաւետարանէն Քրիստոսի և ի ներքս խառնին զրով, զի կենաց բանին զմահացու բանն լօմարտութեամբ առնուցուն ժառանգողքն, և զալոսիկ զրեալ լի քարտիսի ծախոն և կնքեն տէրունական խաչիւ, զի զալին Աստուծու կարծին տղէտք և անմիտ մարդիկ հնշտասէրք, և առեալ զնին ի թապիլի՝ կապին ի բազուկս և ի պարանոցս մանկանց իւրեանց և անասնոց, ձիոց, եղանց և ոչխարաց և պահ ակ կոչեն զալն, Ալլ և ծեռածութիւն առնեն մանկանց աղալոց իւրեանց ասեն, ոչ լինիլ ի մարմինս նոցա, ալլ բքաւ բնրանոց իւրեանց ձեռամբարձին զանոսիկ ասեն, թէ լաշաղկոտէ հիւանդացեալ է և մի տոցէ զարձեալ աչառումն, Ալլ և պատ առնեն զհիւանդացեալ մանկամբն, ալլ և ընկենուն ծակունս ի երակէ ի չուր և արբուցանեն մանկանց և ալլոց հիւանդաց, վասնզի թէ ակն առած է կամ թէ և ալլ ոչ առնու, Ալլ և հալեն կապար և արկաննեն ի չուր ամառնու և զնեն ի զերալ կոծից մարդկան և ասեն, թէ դեղ է սրտամբարի, նաև ջերմմոտի և ատամիտացաւի ի բացուստ արմատս ոստոց

հատանեն և ի ցիցս կապեն ի ծառս տանձու և ազլ թուփս որ լինի շուրջ զսենակաւն և ասեն թէ դեղ է ջերմնոտիւ:

Ազլ և ի ծննդեան բազում զօրութիւնս առնեն. նաև լորժամ մնուեալն հանեն ի տանէն, Ազլ և ի հարսանիմն բազում հմալք վասն ճանապարհի և լորժամ առաջի աւագաց երթիցն. նաև ի հնձանս և ի կարսախ, ազլ և ի վաճառելն և ի գնելն. նաև ի հանդերձի կտրելն և ի զգենուլն. ազլ և լուղարկելն և ի հանելն ամանէն. նաև ի վերաէ որացն, ազլ և ի նարօտս երկութեան և ոստանանկութիւնս. ազլ և ամենալն օրինակս արուեստիցն. Եւ ի խնդրել ջուր ումեք ի գիշերի անցուցանեն ընդ նա դանակ գ բենոի և ալնպէս տան ըմբել, ազլ և արգելուն տալ մաղ խնդրողաց կամ կրակ, Նորնպէս և լաւուրս ամելեաց և որն արգելուն տալ բան խնդրողաց, Ազլ և ի գալ նորու տարուն ընկենուն երկաթի կուժ և քարշն ծիր զերթ բնակովն. և առաւետուն առաքեն աղջկունս շրջել ի քարինս ի բայեալ և հաքել ի ներքու նորա. թէ զտանի մաղ սպիտակ, ասեն թէ բախտի հասաւ առցէ ալր ալնոր. և թէ զտանի մաղ սեաւ, ասեն թէ բախտ հասաւ զոր տան օրիորդն ընդ երիտասարդի, Նաև թէ որ երեկս աքաղաղն խօսի հմալին. և թէ ի մալրեաց ածիցէ ձալն աքաղաղի՝ զգլուխն հատանեն.

Ազլ և ամենալն արուեստաւոր ի մոտս տարուն արուեստս իւրեանց հմալին, դարբինն կրանաւ. մի հարկանէ զսալն առանց երկաթու ոստանարկ թէ մի քարչէ կրոց և բիճաներիս հար կանէ մանոցն թել մի ձգէ և տակ զսալն զի չլաւնա. Եւ ի տարեկան տօնս և եկեղեցական նուէրս բառնան բազում հմալութիւնս, ազլ և ի հարկանել ժամահարին զժամանակս հմալին. Եւ ի մտանել կամ ելանելն իւրեանց կամ օտարաց ընդ զուրս տանն՝ հմալին, Ազլ և ի լուանալ զհանդերձս կամ զլուխ արանց կամ կանանց հմալին. խորդն ապականութեան ապրիշմաքարշն և որ զլուխ դիւթութեանց ալսորիկ է հատանմալութիւն:

Արդ ակս ամենալն չարին խորհուրդք և պատրանք սատանալսկանք ապականազործութիւնք զնոգիս մարգկան կորուսանեն և լաւանդութենէ աստուածութեան ուրացութիւնք և ի ճշմարիտ զիտութենէ նորա օտարութիւնք. Արդ եթէ ոք ալսպիսի չար սովորութեան հաւանեցաւ և լուսոլց, լախոնապէս հեռացաւ նա լԱսուծութեանց ուրացաւ զճշմարիտ աւանդութիւն և ընտանեցաւ սատանալի:

Արդ քրիստոնեակ անուն զարսպիսի չար սովորութիւն մի վշխեցեն առնել ի գարանց կամ ի կանանց. Եւ որք առնեն ազլազգեաց քրիստոնէից մի իշխեցին երթալ ի նոցա դիւթան, կամ ի կախ արդսն և ի ջրուուիթ սն ի գարընկէցան և ազլ հը-

մալոն վասն պիտուից իւրեանց, որ կարծեցուցանեն առաջք թէ զոէ ի նոսա իւմաստութիւն և զիտութիւն զոր ոչ տնին. և ոչ օգնեն բայց միայն զալո՞ զի հեռացուցանեն վլաստուծու.

Արդ եթէ ոք էերկարեալ իցէ բար չար սովորութիւնն և զըդ-ջանաէ՝ մինչեւ ի մահ ապաշխարենցէ. և իմուին թողական արժանի լիցիւ Ապա թէ մի անդամ արար տղիտութեամբ կամ եհարց ՚ի նոցանէ՝ ամ մի ապաշխարիցէ, և է կամ երկիցս կամ երից մինչև նըրջն. ախունետե արհամարհանու է պատուիրանին ընդ անհաւատոն համարեսցի ամինալին տամբն իւրով. Խակ եթէ ի զղջումն եկեսցէ մինչեւ յմահ ապաշխարեսցէ. բայց զնասակն և ժամանակն տեսցեն զիտնականք և ալնապէս դատեսցին որպէս արժան էն.

Անհերքելի է, որ մի բան ակնքան երկար, անփոփոխ չէ մնում, ինչքան ժողովրդական հաւատալիքները. Կանոնները գրելուց մինչեւ ալպոր անցել է մօտ հազար տարի և զուցէ էլ աւելի, մեր ժողովուրդը ամուր կերպով պահել է իւր մնութիւնապաշտութիւնները. նա հմակել է, փալչու, զրբացի դիմել կեանքի ամեն մի արտաստոր պատահարքում. ուրախութեան, տիրութեան, հիւանդութեան, երկիւղի, բան փոխ տալու և առնելու, ճանապարհորդութեան և ալլն ժամանակ. եկեղեցւոյ հաղթերը քարոզներով, եկեղեցական կանոններով առանց հետեանքի փորձեր են արել արմատախիլ անել ժողովրդի մտաւոր աշխարհա-հակեցութեան անհրաժեշտ մաս կազմող հաւատալիքները, բայց լոկ սպանալիքները, հրամանները չեն ազգել և երբէք չեն ազգիւ.

Արս փոքրիկ հատուածը մի նմուշ է, որ զանելով էջմիածնի ձեռագրերում հրատարակեցինք:

ՄԵՍՐՈՎ ՎԱՐԴԱՎԵՏ

